

Նոյն վըրեժով կը խառնեն:
 Մեկուն կուշտեն աղիք մը վար սահմըռտկած՝
 Սայլին ճեղքին կ'առկախի.
 Շո՛ւն մ'ետեւէն կու գայ եւ զայն քաշած դուրս
 Լափլիզելու կը զբաղի:
 Ո՛չ ձեւ ունին, կամ ոչ գըլուխ. կը կըրեն
 Յազար տեսակ զէնքի խոց:
 Արդէն իրենց մարմինն եղբայր է հողին.
 Կ'երթան ահա գերեզմնոց:
 Անոնց վըրայ ո՛չ ոք կու գայ արտասուել
 Կամ տալ ողջոյնը վերջի.
 Զաղքին լռութեան մէջ արեան հոտը միայն
 Չեփիւռին հետ կը շըրջի:
 Բայց մութին մէջ պատուհանէ պատուհան
 Ահա մոմեր կը վառին.
 Մամերն են որ գաղտագողի կ'աղօթեն
 Վըրան կարմիր դագաղին:
 Եւ այն ատեն պատըշգամքի մը վըրայ
 Կոյս մը կ'ելլէ գեղանի,
 Ու կը նետէ արտասուաթոր բուռ մը վարդ.
 Սայլին վըրայ՝ որ կ'անցնի: